ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 10/08

Քաղ. Երևան 26 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. մայիսի 26-ի նիստում (արձանագրություն № 61/3) քննարկեց 2008թ. ապրիլի 25-ի «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի դիմումը՝ «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ**» բառային ապրանքային նշանը 2000 թվականից ԱԾՄԴ 32, 37 և 44-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար հանրահայտ ճանաչելու խնդրանքով:

Դիմումին կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ**» ապրանքային նշանը ՀՀ-ում հանրահայտ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու համար 250000 դրամ պետական տուրքի վճարման անդորրագիրը.

2. «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ**» բառային ապրանքային նշանի պատկերը, 5 օրինակ.

3. «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ» հասարակական կազմակերպության հետազոտական խմբի կողմից կատարված ՀՀ տարածքում **«ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ»** գարեջրի հանրահայտության գնահատման վերաբերյալ սոցիոլոգիական հարցման հաշվետվությունը.

4. Տեղեկություններ 1997թ. սկսած «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ**» ապրանքային նշանով մակնշված ապրանքի իրացման մասին.

5. Տեղեկություններ «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի ֆինանսական արդյունքների վերաբերյալ

6. Քաղվածքներ «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ**» ապրանքային նշանի գովազդի համար կատարված ծախսերի վերաբերյալ.

7.Պետական ռեգիստրի վկայականի պատճենը.

8. «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ**» ապրանքային նշանի պատկերը՝ 5 օրինակից:

Բողոքարկման խորհրդի նիստում բողոքարկման խորհրդի կոլեգիայի (այսուհետ նաև կոլեգիա) անդամ Ա.Տոնիկյանը զեկուցեց դիմումի, ինչպես նաև հայտատուի կողմից ներկայացված բոլոր տեղեկությունների և փաստարկների ուսումնասիրման արդյունքների մասին՝ նշելով, որ ներկայացված նյութերը վկայում են Հայաստանի Հանրապետությունում «**ԿԻԼԻԿԻԱ KILIKIA**

КИЛИКИЯ» բառային ապրանքային նշանի հանրահայտ լինելը 2000 թվականից: Միաժամանակ կոլեգիան համարում է, որ «ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ» ապրանքային նշանը կարող է ՀՀ-ում հանրահայտ ճանաչվել դիմումում նշված միայն ԱԾՄԴ-ի 32-րդ դասի «գարեջուր» ապրանքատեսակի համար, քանի որ «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված նյութերում բացակայում են տեղեկություններ դիմումում նշված 37-րդ և 44-րդ դասերում «ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ» ապրանքային նշանով մակնշված ծառայությունների ճանաչվացության և լայնորեն օգտագործման մասին, այսինքն դիմումը կարող է բավարարվել մասնակիորեն, և այդ ձևակերպմամբ հարցը դրվել է բողոքարկման խորհրդի քննարկմանը:

2008թ. ապրիլի 25-ի դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված բոլոր նյութերը և հաշվի առնելով կոլեգիայի նիստում դրանց ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը համաձայնվեց կոլեգիայի այն եզրակացությանը, որ ներկայացված նյութերը հաստատում են «ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ» բառային ապրանքային նշանի հանրահայտ լինելը 2000 թվականից՝ միայն ԱԾՄԴ 32-րդ դասի «գարեջուր» ապրանքատեսակի համար:

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի ընկերության ներկայացուցիչը չառարկեց դրան:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ և 21.2-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 80-րդ կետի «ա» ենթակետով, «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին կարգի» 1.1 կետի «բ» ենթակետի 2-րդ պարբերությամբ, 3.1 կետով և 4-րդ կետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ-ի 2008թ. ապրիլի 25-ի դիմումը մասնակիորեն և «ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ» բառային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2000 թվականից՝ ԱԾՄԴ 32-րդ դասի «գարեջուր» ապրանքատեսակի համար:

1. Որոշման կայացման թվականը	26.05. 2008թ.
2.Հանրահայտ ապրանքային նշանի գրանցման համարը	դ 25

3. Հանրահայտ ապրանքային նշանի պատկերը	«ԿԻԼԻԿԻԱ KILIKIA КИЛИКИЯ» (բառային ապրանքային նշան)
4. Թվականը, որից սկսած ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվում ՀՀ-ում	2000թ.
5. Հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ անվանումը և գտնվելու վայրը (հասցեն)	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՓԲԸ (Ադ.Իսակովի պող. 8, 0082, Երևան, Հայաստանի Հանրապետություն)
6. Ապրանքների և ծառայությունների Միջազգային դասակարգման դասերին համապատասխան խմբավորված այն պրանքների ու ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ ապրանքային նշանը ճանաչվել է հանրահայտ	32-րդ դաս՝ «գարեջուր»

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան